Շինանարարական մրցույթների ուսումնասիրություն

Համաձայն գնումների հաշվետվողականության ARMEPS կայքում ներկայացված տվյալների՝ 2021 թ. ընթացքում կայացել է շինարարական (այդ թվում վերանորոգման, բարեկարգման, քանդման, մոնտաժման և ապամոնտաժման) աշխատանքների ձեռքբերման 1313 ընթացակարգ՝ շուրջ 116,5 մլրդ դրամ պայմանագրային արժեքով, իսկ 2022թ. օգոստոսի 11-ի դրությամբ՝ 686 ընթացակարգ՝ շուրջ 102,3 մլրդ դրամ պայմանագրային արժեքով:

2021թ. վերոնշյալ ընթացակարգերին մասնակցել է շուրջ 750 ընկերություն, որից որպես հաղթող ընտրվել է 433-ը (կամ մասնակիցների 58%), իսկ 2022թ.-ի հունվարի 1-ից օգոստոսի 11-ը ընկած ժամանակահատվածում՝ 561 մասնակից ընկերություններից հաղթող է ճանաչվել 317-ը (կամ մասնակիցների 57%):

Այսպիսով, բերված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ դիտարկվող երկու ժամանակահատվածում էլ կայացած ընթացակարգերին հայտ ներկայացրած ընկերությունների կեսից ավելիին հաջողվել է ներգրավվել պետական պատվերների գործընթացում:

Հարկ է նշել, որ 2021թ.-ի համեմատ 2022թ. դիտարկվող ժամանակահատվածում որոշակի բարելավում է նկատվել կայացած ընթացակարգերում միջին մասնակցության ցուցանիշի առումով, որը կազմել է 3,7՝ 2021թ.-ի 3 ցուցանիշի փոխարեն:

Աղյուսակներ 1-ում և 2-ում ներկայացված է դիտարկվող ժամանակահատվածներում կայացած շինանարական աշխատանքների ձեռքբերման ընթացակարգերում որպես ընտրված մասնակից ճանաչված խոշորագույն 20 ընկերությունների նկարագիրը:

Աղյուսակ 1. Շինարարական աշխատանքների գնումների խոշորագույն 20 հաղթողները, 2021թ.

	Հաղթող մասնակիցը	Պայմանագրային արժեքը, մլրդ դրամ	Մասնաբաժինը, %	Հաղթած ընթացակարգերի քանակը	Մասնաբաժինը, %
1	ԱԱԲ Պրոեկտ ՍՊԸ	16,1	14	14	1
2	Վայքի ՃՇՇ ՓԲԸ	7,9	7	6	0,5
3	Ոսմար ՍՊԸ	7,5	6	6	0,5
4	Լեոպոլդ և ընկերներ ՍՊԸ	7	6	8	1
5	Մ-Գրուպ ՍՊԸ	4,1	4	1	0,1
6	Մերձմոսկովյան ԲԲԸ	3,8	3	8	1
7	Մեղրու ՃՇՇՁ ՍՊԸ	3,5	3	12	1
8	Քարավան ՍՊԸ	3,5	3	4	0,3

9	Բիլդեր Քոնսթրաքշն ՍՊԸ	3,4	3	8	1
10	Շինպլյուս ՍՊԸ	2,9	2	7	1
11	Կապանի Նորոգշին ՍՊԸ	2,8	2	25	2
12	Ապառաժ ՍՊԸ	2,2	2	9	1
13	Գրիգորյան Շին ՍՊԸ	2,2	2	9	1
14	Էն Շին ՍՊԸ	2	2	11	1
15	ՎՄՎ Քամփնի ՍՊԸ	1,9	2	5	0,4
16	Ճանապարհ ՍՊԸ	1,7	1	12	1
17	Բաղրամյանշին ԲԲԸ	1,6	1	10	1
18	Գրիգոր Հարությունյան ՍՊԸ	1,5	1	2	0,2
19	ՎԱՆԻ ՍՊԸ	1,5	1	10	1
20	Սիսիանի ԲՈՒԱՏ ՍՊԸ	1,4	1	6	0,5
	Ընդամենը 20 խոշոր հաղթողները	**78,5**	**67**	**173**	**13**
	Ընդհանուր շինարարական աշխատանքների կայացած ընթացակարգերը	116,5	100	1313	100

Աղյուսակ 2. Շինարարական աշխատանքների գնումների խոշորագույն 20 հաղթողները, 2022թ. հունվարի 1-ից օգոստոսի 11-ը ընկած ժամանակահատված

	Հաղթող մասնակիցը	Պայմանագրային արժեքը, մլրդ դրամ	Մասնաբաժինը, %	Հաղթած ընթացակարգերի քանակը	Մասնաբաժինը, %
1	Քարավան ՍՊԸ	10,2	10	4	1
2	ԱԱԲ Պրոեկտ ՍՊԸ	7,4	7	4	1
3	Գրիգորյան Շին ՍՊԸ	5,7	6	7	1
4	Լեոպոլդ և ընկերներ ՍՊԸ	5,3	5	5	1
5	Ճանապարհ ՍՊԸ	3,9	4	8	1,2

6	Խաչիար ՍՊԸ	3,7	4	2	0,3
7	Արփա-Սևան ԲԲԸ	3	3	2	0,3
8	Տ-Քնսթրաքշն ՓԲԸ	3	3	13	2
9	Եվրոասֆալտ ՓԲԸ	2,9	3	3	0,4
10	ՎՄՎ Քամփնի ՍՊԸ	2,5	2	2	0,3
11	Արիովշին ՍՊԸ	2,2	2	8	1
12	ՎԱՆԻ ՍՊԸ	2,2	2	5	1
13	Կապանի ՃՇՇ ՍՊԸ	2,1	2	9	1
14	Կապավոր ՍՊԸ	1,7	2	6	1
15	Հայաստանի սպառողական կոոպ. միության Ախուրյանի Կոոպշին ՍՊԸ	1,6	2	2	0,3
1	Արարատ-Ճանշին ՍՊԸ	1,5	1	2	0,3
17	Գրիգոր Հարությունյան ՍՊԸ	1,5	1	2	0,3
18	Բիդեք ՍՊԸ	1,3	1	1	0,1
19	Արարատշին ՍՊԸ	1,3	1	2	0,3
20	Արտ Պլաս ՍՊԸ	1,3	1	6	1
	Ընդամենը 20 խոշոր հաղթողները	**64,3**	**63**	**93**	**14**
	Ընդհանուր շինարարական աշխատանքների կայացած ընթացակարգերը	102,3	100	686	100

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակների տվյալներից, 2021թ. համեմատ 2022թ. դիտարկվող ժամանակահատվածում արժեքային առումով 20 խոշորագույն մատակարարների կենտրոնացվածության ցուցանիշը մի փոքր նվազել է՝ 67-ից դառնալով 63%, իսկ քանակային առումով՝ ավելացել է՝ 13-ից 14%: 2021թ. ցանկում ընդգրկված ընկերություններից 8-ը հայտնվել է նաև 2022թ. դիտարկվող ժամանակահատվածի 20-յակում (Աղյուսակ 1 և 2):

Ընդհանուր առմամբ, ամբողջ աշխարհում շինարարական աշխատանքների ձեռքբերման գնումները համարվում են ամենաշատ կոռուպցիոն ռիսկեր պարունակող ուղղություններից մեկը, քանի որ այս ոլորտի պայմանագրերի կառավարման գործընթացը բավական բարդ է և երբեմն դժվար վերահսկելի:

Հարկ է նշել, որ վերջին ժամանակաշրջանում այս առումով կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ: Մասնավորապես, 2021թ. հուլիսի 1-ին ընդունված և 2022թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Քաղաքաշինության մասին» օրենքում փոփոխությունը միտված էր շինարարական ստանդարտների ու դրանց նկատմամբ հսկողության գործիքակազմի բարձրացմանը: Համաձայն այս փոփոխության՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված՝ պատվիրատուների կողմից ձեռք բերվող շինարարական աշխատանքների կատարման ամբողջ ընթացքում կապալառու կազմակերպությունը շինարարական օբյեկտի տարածքը պետք է համալրի տեսախցիկներով, որոնք պետք է շուրջօրյա տեսանկարահանեն ամբողջ շինարարական հրապարակը՝ ընդգրկելով կառուցվող բոլոր տեսակի շինությունները, և այդ տեսախցիկներին հասանելիություն պետք է ապահովվի ինչպես պատվիրատուի, այնպես էլ պատվիրատուի նշած օգտատերերի համար: Սույն պահանջը տարածվում է 70 մլն դրամից բարձր արժեք ունեցող, գաղտնիություն կամ հատուկ ռեժիմ չպարունակող բնակելի, հասարակական, արտադրական, էներգետիկ, տրանսպորտային և հիդրոտեխնիկական նշանակության շինարարական օբյեկտների վրա, բացառությամբ գծային ենթակառուցվածքների:

Մեկ այլ կարևոր օրենսդրական փոփոխություն ընդունվեց 2022թ. մարտի 4-ին «Գնումների մասին» օրենքում, որը միտված էր արտակարգ իրավիճակների հետևանքով առաջացած և հրատապ համարվող խնդիրներին հնարավորինս օպերատիվ արձագանքման հնարավորություն ստեղծելուն: Նաև որոշակիորեն ամրագրվեցին գնումների համակարգում ընկերությունների վարկանիշավորման սկզբունքները, ինչը առաջարկվել էր նաև ՀՔՀԱԿ ՀԿ-ի կողմից:

Մասնավորապես, այս փոփոխությամբ սահմանվեց, որ մարդկային զոհերի, մարդու առողջությանն ու շրջակա միջավայրին զգալի վնասի, խոշոր նյութական կորուստների և մարդու կենսագործունեության բնականոն պայմանների խախտման հանգեցնող կամ նման իրավիճակներ առաջանալու վտանգի դեպքում հրատապ համարվող կարիքների բավարարման շրջանակում շինարարական աշխատանքների գնման գործընթացը ՀՀ կառավարության որոշմամբ կարող է իրականացվել առանց սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի՝

1) գնման առարկայի բնութագրերը սահմանելով որպես գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան.

2) պայմանով, որ շինարարական աշխատանքները կմեկնարկեն ըստ փուլերի՝ փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերի հիման վրա:

Կառավարության որոշմամբ պետք է հիմնավորվի որոշման ընդունումը պայմանավորող հանգամանքների առկայությունը:

Հարկ է նշել, որ այս կարգավորումներով փորձ է կատարվում որոշակիորեն նվազեցնել արտակարգ իրավիճակներում մեկ անձից գնման ընթացակարգի կիրառման պրակտիկան: